‘ *Յիշատակ է խորհրդանոցս Խամփերեցի Ռամազին որդւոյ Հանին, Պօղոսի որդւոյ Շայնին, եւ իւրեանց ծնողաց Գուհարին" :*

''*Թվին ՌՃԿԸ, շինեցաւ սուրբ Նշան եկեղեցին յիշատակ ամեն քրիստոնէից ննջեցելոց, եկաց և ընակաց, արանց և կանանց, ծերոց, և տղայոց, մանաւանդ Ջուղայեցի Գէորգի որդոյ պարոն Պետրոսին, և Ճամախեցի Յակոբի որդի Թումարին և Օհանին և ծնողաց Եղիսաբէթին, և հանգուցեալ որդւոյն Մաթէոսին, ով ընթերցողք յոր ժամ ընթեռնուք, յիշեցէք աղօթս ձեր Անտօն անարժան քահանայն՝ յիշեալ լիցիք անմահ գառին Աստուծոյ":*